Государственное учреждение
“Бюро по реализации
градостроительных программ”
Министерства градостроительства
Республики Армения

State Agency “Urban Development
Projects Implementation Unit”
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

Հայաստանի Հանրապետության
Քաղաքաշինության նախարարության
«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման
գրասենյակ» պետական հիմնարկ

0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Governtment House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

12.02.14թ N ՔԱ/1-76-14

<<ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/11>> ծածկագրով շրջանակային
համաձայնագիր կնքած բոլոր Մասնակիցներին

**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/11»** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել <<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ, կենցաղային ապրանքներ>> ապրանքախմբից պատի ժամացույց վայրկենաչափով (այսուհետ՝ Ապրանք):

Գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով **մինչև 24-ը փետրվարի 2014 թվականի ժամը 10:00-ն:**

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով **24-ը փետրվարի 2014 թվականի ժամը 10:00-ին:**

Հայտը ներառում է.

1. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), և
2. Գնի առաջարկ (Հավելված N 2):

Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (հավելվածներ)՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**- «Պիտանելիության չափորոշիչ».**

ընթացակարգին մասնակցելու դիմում՝ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

**- «Ֆինանսական չափորոշիչ».**

գնի առաջարկ (Հավելված N 2), որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով մեկ թվով՝ միավոր գնի ու քանակի արտադրյալի արդյունքում ստացված ընդհանուր գումարի չափով: Կայքում գնի առաջարկը պարտադիր լրացվում է մեկ թվով՝ միավոր գնի ու քանակի արտադրյալի արդյունքում ստացված ընդհանուր գումարի չափով **առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման**:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/11>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ կողմից կազմակերպված գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ <<**ՔՆՔԾԻԳ-ԾՀԱՊՁԲ-14/3**>>:

Կից ներկայացվում են հայտում ներառվող հավելվածները և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Հ. Սարգսյան

*Կատ.*
*Ա. Վարդանյան*
*հեռ. 010 564 316*